


1 մնար 92 հմ., իսկ լաջնութիւնը՝ 60 հմ.: Գլխուն վրայ կը կրէ արքայական թագն եւ կոնակը՝ թագաւորական ծիրանին: Աջ ձեռքով բռնած է իր մականը, իսկ ձախով՝ զոյգ մը ձեռնոց: Գլուխը կը հանգչի բարձի մը վրայ: Ոտքերուն տակ կանգնած են առիւծի երկու կորիւններ (1): Հին Ժամանակ կամարին խորը կազմող պատը զարդարուած էր խայտարղէտ մարմարիներով. իսկ բուն կամարը՝ գոյնզգոյն քարերով: Գլխուն եւ ոտքին կողմերը, նոյն-



Գեկնադարակ — Les Catacombes.

պէս եւ դամբարանին վերեւ՝ ճակատը՝ զարդածիրի մը մէջ դրուած էին Լեւոնի զինանշանները, ոսկի, արծաթ ու կապոյտ գոյներով: Ամբողջ դամբարանն առնուած էր քարէ շինուած ճարտարապետական շէնքի մը մէջ, բոլորովին ոսկեզօծ. երկու կողմերէն կը բարձրանային աղօսածե-

(1) Հեղինակ մը՝ A-L. Millin՝ Ֆրանսական Մեծ-Յեղափոխութենէն առաջ նկարագրելով Լեւոնի գերեզմանը՝ կրտսէ, քի Լեւոնի ոսկերուն սակ զտնուած առիւծները՝ քանդակագործին մէկ քանակաւոր յիշատակներ չէ, այլ անոնք Հայոց բազալտոքիտի գիմանեանները կը ներկայացնեն: (*Antiquités nationales* Եւն, հս. Ա, եր. 126, ծան. 4)